ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 09/21/6179-16

«20» 05 2016թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի Լիանա Դոյդոյան

Ձեր՝ 17.05.2016 թ. Թիվ 283-ի 6 հարցմանն ի պատասխան տեղեկացնում ենք.

1. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին և «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 15.10.2015 թ. թիվ 1204-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգի» առաջին հավելվածին համապատասխան՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով գրավոր հարցումների վիճակագրությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների և բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձևերից առանձին:

2. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 16.12.2013թ. թիվ 589-Ն հրամանով, որը հրապարակված է նախարարության պաշտոնական կայքում՝ www.mtc.am, «Տեղեկատվական կենտրոն/Ներքին գործավարության կարգ» բաժնում:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 17.07.2014թ. թիվ 290-Ա հրամանի 2-րդ կետի (Տե՛ս **www.mtc.am**, «Իրավական ակտեր/Նախարարի հրամաններ») համաձայն՝ հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները մշակում է նախարարության հասարակության հետ կապերի բաժինը:

Հարգանքով՝ **Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**